ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՕԴԱՉՈՒ ՍԱՐՔԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-17/1

ք. Երևան «3» օգոստոս 2017թ.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամն, ի դեմս ռեկտոր Ռ.Զ. Մարուխյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Բեսթ Բիլդինգ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված անօդաչու սարքերի լաբորատորիայի վերակառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրը կնքելուց հետո 60 օրացույցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում

կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **25 899 600 (քսանհինգ միլիոն ութ հարյուր իննսունինը հազար վեց հարյուր)** ՀՀ դրամ, որից 4 316 600 (չորս միլիոն երեք հարյուր տասնվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105 Բանկը՝ <Անելիքբանկ> ՓԲԸ Հ/Հ 11800109943100 ՀՎՀՀ 01504054	Բեսթ-Բիլդինգ ՍՊԸ Հասցե՝ ք. Երևան, Կողբի 1 փողոց, 5 Բանկ՝ <ՀայէկոնոմԲանկ> ԲԲԸ Հ/Հ 163068076716 ՀՎՀՀ 02266584
Ռեկտոր---------- Մ. Մարուխյան (ստորագրություն) Կ.Տ	Տնօրեն ---------- Վ. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ 1
«___» օգոստոս 2017թ. կնքված
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ԱՆՕԴԱՉՈՒ ՍԱՐՔԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
1-1. 'Անօդաչու սարքերի լաբորատորիայի' վերակառուցում					
	Հատակների պատրաստում				
1	Վերնահարկում լցված շլաքի մասնակի հեռացում (30x18x0,2)	մ³	110.0	1.032	113.56
2	Մնացած շլաքի հարթեցում, տոփանում և ամրացում ցեմենտաջրով	մ²	200.0	0.661	132.29
3	Պողպատե եռակցված ցանցի տեղադրում տոփանած շլաքի վրա Փ3Բp-I ք.100x100մմ (երկտակ)	մ²	200.0	1.253	250.57
4	Պողպատե եռակցված ցանցի տեղադրում Փ3Բp-I ք.100x100 մմ (մեկտակ)	մ²	315.0	0.626	197.33
5	Հատակի պատրաստում թեթև բետոնի շաղախով, տոփանումով (հարթ թռթռիչով) բետոն B15 դասի h=60մմ	մ²	515.0	2.730	1405.91
6	Հատակների սալիկապատում պրեսգրանիտե սալերով 60x60սմ, բարձր որակի (գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ)	մ²	515.0	13.069	6730.71
7	Մուտքային մասում բետոնե աստիճանների կառուցում B15դասի բետոնով	մ³	0.70	52.657	36.86
	Պատեր				
1	Պատերի ներքին մակերեսների երեսապատում գիպսաստվարաթղթե սալերով d=12,0մմ , մեկ տակ, համապատասխան պրոֆիլներով	մ²	280.0	3.801	1064.23
2	Պատերի պատրաստում երկտակ գիպսաստվարաթղթե սալերով d=12,0մմ , համապատասխան պրոֆիլներով, բամբակե ջերմամեկուսիչ միջադիրով	մ²	66.000	6.485	428.00

3	Պատերի պատրաստում թեթև բետոնե քարերով (պեմզաբլոկ) 40x20x20սմ	մ²	30.000	2.961	88.84
4	Պատերի ներկում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ²	410.0	1.057	433.53
5	Սան.հանգույցի պատերի տակ բետոնե հիմքերի կառուցում B15 դասի թեթև բետոնով	մ³	0.80	38.850	31.08
6	Պողպատյա մակերևույթների (ֆերմաներ, խողովակներ) յուղաներկում 2 անգամ	մ²	250.000	1.065	266.35
7	Պլաստիկե պատուհանագոգերի տեղադրում 250մմ լայնության, սպիտակ գույնի	մ	29.000	1.667	48.34
	Առաստաղներ				
1	Կախովի առաստաղի իրականացում 'Արմստրոնգ' տիպի, հիմնակմաղքի պատրաստումով, ներառյալ անհրաժեշտ կցամասերը (Նախասրահ, բուֆետ, լսարան, ղեկավարի սենյակ, արհեստանոց)	մ²	254.200	10.019	2546.90
2	Կախովի առաստաղի իրականացում պլաստմասե պրոֆիլներով (սան.հանգույց) (գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ)	մ²	8.000	3.033	24.26
	Մետաղապլաստե դռներ և պատուհաններ				
1	Մետաղապլաստե երկփեղկ դռան տեղադրում (փեղկերը բացվող) ֆրամուգայով - 2 հատ գույնը՝ սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4, բարձր որակի (արհեստանոց, լսարան)	մ²	7.800	37.292	290.88
2	Մետաղապլաստե մեկ փեղկանի դռների տեղադրում 3 հատ գույնը՝ սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4, բարձր որակի (լսարան և ղեկավարման սենյակ, պահեստ)	մ²	5.000	34.376	171.88
3	Մետաղապլաստե դռների տեղադրում սան.հանգույցներում 4 հատ, գույնը՝ սպիտակ 60մմ հաստ, բարձր որակի	մ²	6.000	34.375	206.25
4	Մետաղապլաստե պատուհանների (փեղկերի) տեղադրում ղեկավարման սենյակում երկտակ բացվող մաս 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ,	մ²	3.000	31.390	94.17

5	Մետաղապլաստե պատուհանների (փեղկերի) տեղադրում ղեկավարման սենյակում երկտակ ապակիով չբացվող, ձայնամեկուսիչ ,	մ²	30.400	22.250	676.40
6	Ապակե միջնորմի տեղադրում	մ²	16.700	28.413	474.49
7	Մետաղապլաստե պատուհանների (փեղկերի) տեղադրում արհեստանոցի և լսարանի միջնամասում 2 տակ ապակիով	մ²	31.400	22.250	698.65
8	Մետաղապլաստե փեղկերի ամրացում պողպատե կոշտության կողերով[a] ուղղանկյուն խող. 50x50x3մմ	մ	14.000	2.463	34.48
9	Տեղադրված մետաղապլաստե պատուհանների և այլ ճեղքերի հերմետիկացում	մ²	2.000	5.650	11.30
	Փորձարկման սրահ				
1	Պողպատե կանգնակների տեղադրում հատակների վրա և ամրացում ֆերմաներից [a] քառանկյուն խող. 50x50x3մմ	մ	58.000	2.463	142.86
2	Պողպատե կապերի տեղադրում քառանկյուն խողովակներից 50x50x3մմ	մ	55.000	2.463	135.47
3	Հորիզոնական կապերի տեղադրում քառանկյուն խողովակներից 50x50x3	մ	60.000	1.456	87.33
4	Գործվածքային ցանցերի փաթաթում ստացված կառուցվածքի կողային և տանիքային մակերեսներով (ցանցի բջիջի չափերը 50x50մմ)	մ²	360.000	0.626	225.51
5	Շերտավարագույրի տեղադրում, բարձր որակի (գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ)	մ²	80.0	3.396	271.70
	Սան.տեխնիկական աշխատանքներ, ջեռուցում, կոյուղի				
1	Սան. հանգույցներում պատերի սվազում ցեմ/ավազային շաղախով	մ²	55.000	1.615	88.84
2	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստության	մ²	6.500	1.198	7.79
3	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում բիտումի մաստիկա 2 շերտ	մ²	6.500	1.480	9.62

4	Պատերի երեսապատում որակյալ հախճասալերով (գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ)	մ²	55.0	6.670	366.83
5	Հատակների երեսապատում կերամիկական սալիկներով (գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ)	մ²	6.500	6.675	43.39
6	Զուգարանակոնքի տեղադրում	հատ	2.000	25.860	51.72
7	Կերամիկական լվացարանի տեղադրում, ոտնակով	հատ	2.000	15.950	31.90
8	Չժանգոտվող հոսակների տեղադրում	հատ	2.000	4.645	9.29
9	Խոհանոցակոնքի տեղադրում երկտեղանի	հատ	1.000	19.360	19.36
10	Զուգարանակոնքի բաչոկների տեղադրում	հատ	2.000	14.540	29.08
11	Կոյուղագծերի կառուցման համար հողի քանդում ձեռքով	մ³	4.500	3.769	16.96
12	Պատերի մեջ անցքերի բացում	տեղ	6.000	4.122	24.73
13	Բետոնե պատերի քանդում	մ³	2.500	17.292	43.23
14	Դիտահորի վերանորոգում	հատ	1.000	12.920	12.92
15	Այումինե լավորակ ջեռուցման սարքեր տեղադրումով 0.12կՎտ H=0.6մ, ΔT=50 (300 սեկցիա)	Էքմ	84.000	0.682	57.28
16	Այումինե մարտկոցների արժեքը	սեկցիա	300.000	4.685	1405.60
17	Ջեռուցման մարտկոցի կարգավորող փական ուղիղ Φ15մմ,տեղադրումով texad	հատ	60.000	4.231	253.83
18	Ջեռուցման մարտկոցի կախիչ տեղադրումով	հատ	30.000	0.226	6.79
19	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում Φ25x2,3մմ, փորձարկումով	մ	112.000	3.043	340.81
20	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում Φ20x1,9մմ , փորձարկումով	մ	24.000	3.437	82.49
21	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր տեղադրումով	հատ	380.000	0.226	86.03
22	Ջեռուցման պողպատե խողովակների տեղադրում Φ57մմ	մ	126.000	2.630	331.34

23	Ջեռուցման պողպատե խողովակների տեղադրում Φ40մմ	մ	36.000	2.120	76.33
24	Ջեռուցման պողպատե խողովակների տեղադրում Φ32մմ	մ	36.000	1.772	63.78
25	Ջեռուցման պողպատե խողովակների տեղադրում Φ25մմ	մ	30.000	1.590	47.71
26	Պողպատե խողովակների ձևավոր մասեր տեղադրումով	կգ	35.000	1.230	43.06
27	Գնդիկավոր փական Φ50մմ տեղադրումով	հատ	2.000	14.605	29.21
28	Գնդիկավոր փական Φ25մմ տեղադրումով	հատ	2.000	6.115	12.23
29	Գնդիկավոր փական Φ15մմ տեղադրումով	հատ	8.000	4.230	33.84
30	Ավտոմատ օդահեռացուցիչ Φ20մմ տեղադրումով	հատ	2.000	3.000	6.00
31	Տաք, սառը ջրի խառնիչ տեղադրումով	հատ	1.000	8.090	8.09
32	Լվացարանի ծորակ տեղադրումով	հատ	2.000	4.320	8.64
33	Պլաստմասե խողովակի տեղադրում d=110մմ, փորձարկումով	մ	16.000	2.546	40.73
34	Նույնը՝ d=50մմ	մ	8.000	1.629	13.03
35	Պլաստմասե խողովակների ձևավոր մասերի տեղադրում Φ110մմ	հատ	18.000	4.681	84.25
36	Ջեռուցման խողովակների ջերմամեկուսացում (ապակե բամբակ, տոլ, թիթեղ)	$մ^2$	30.000	3.256	97.67
	Էլ.տեխնիկական աշխատանքներ				
1	Դարսածալ խողովակ Φ20մմ, բարակ պողպ. լարով, չայրվող, պլաստմ. ճկուն,բարձր որակի	մ	300.000	0.365	109.41
2	Եռաֆազ փակ խզիչ, 250Ա, բռնակով, չհալվող պլաստիկ, կոմպլեկտ հեղույս, մանեկ,տափօղակով, մոնտաժով	հատ	1.000	26.340	26.34
3	Ավտոմատ պաշտպանիչ սարք, 63Ա, 30միլիամպեր, դին տիպի տեղադրմամբ, ֆազ-զրո միակցմամ,տեստային կոճակով, բարձր որակի, եվրոպական արտադրության կամ համարժեք, մոնտաժով	լրակ.	3.000	62.093	186.28
4	Ավտոմատ պաշտպանիչ սարք, 32Ա, 30միլիամպեր, դին տիպի տեղադրմամբ, ֆազ-զրո միակցմամ, տեստային կոճակով, բարձր որակի, եվրոպական արտադրության կամ համարժեք,	լրակ.	3.000	39.173	117.52

5	LED լուսարձակ 595x595x8մմ չափի, ամստրոնգ տիպի,հզ.36Վտ,6500կ,2840լմ.180-265վ սնուցմամբ,լույսի աղբյուրը ՍՄԴ4014 մոնտաժով	հատ	30.000	39.272	1178.16
6	Հաղորդալար պղնձե ջիղերով, տարբերվող գույներով, երկակի մեկուսացված հատվածքը 5x6մմ²	մ	100.000	1.673	167.28
7	Հաղորդալար պղնձե ջիղերով, տարբերվող գույներով, երկակի մեկուսացված հատվածքը 3x4մմ² մոնտաժով	մ	200.000	0.714	142.87
8	Հաղորդալար պղնձե ջիղերով, տարբերվող գույներով, երկակի մեկուսացվածհատվածքը 3x2,5մմ² մոնտաժով	մ	300.000	0.519	155.74
9	LED պանել 220x220x10մմ չափի, ներքին տեղադրման գիպսաստվարաթղթե առաստաղի, 220վ մուտքային լարումով, 6500կ արտացոլող լույսով, եվրոպական արտադրության կամ համարժեք, բարձր որակի	հատ	20.000	27.812	556.24
10	LED լուսարձակ կախովի, արտադրական տարածքների լուսավորման նպատակով,ալյումինե հենքով, կլոր փայլուն արտացոլող կողային գնդաձև կամ օվալաձև պատերով, 220 մուտքային լարումով,100-150Վտ հզ., սպիտակ արտացոլող լույսով 6500կ, եվրոպական արտադրության կամ համարժեք, բարձր որակի	հատ	15.000	31.250	468.75
	Այլ աշխատանքներ				
1	Նախամուտքային մասում անձրևապաշտպան ծածկի մետաղական կարկասի տեղադրում	տ	0.020	606.000	12.12
2	Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ	մ²	3.000	1.063	3.19
3	Երեսապատում պոլիկարբոնատե ծածկույթով 10մմ հաստության	մ²	2.600	7.942	20.65
4	Նույն տեղում արտաքին պատերի սվաղում բարձրորակ ցեմենտավազային շաղախով	մ²	25.000	2.251	56.28
5	Նույն տեղում հատակների սալիկապատում բազալտե սրբատաշ քարերով d=3սմ	մ²	8.000	12.508	100.06

6	Շին. աղբի բարձում և տեղափոխում 15կմ հեռավորության վրա[a] թափոնակույտ	տ	5.00	3.298	16.49
7	Արտաքին երկայնական պատերի մետաղական սյուների սվաղում ցեմենտ ավազե շաղախով (8 բարձրության վրա)	մ²	18.00	2.251	40.52
8	Մետաղական ցանց, տեղադրումով, երեսապատման համար Փ3Bp-I ք.150x150	մ²	18.00	0.716	12.88
9	Երկայնական պատերի արտաքին մասում պատուհանների հերմետիկացում բազալտե սալերով (պատուհանագոգ) d=20-30մմ 25սմ լայնությունը L=29մ	մ²	7.25	12.568	91.12
10	Արտաքին փայտամած, կառուցումով և քանդումով	100մ²	0.18	78.667	14.16
	Ընդամենը				24680.59
	Վերադիր ծախսեր 13.3%				3282.52
	Ընդամենը				27963.11
	Շահույթ 11%				3075.94
	Ընդամենը				31039.05
	ԱԱՀ-20%				6207.81
	Ամբողջը				37246.86

* Կապալառուն աշխատանքները կատարում է, ք Երևան Տերյան 105 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ <Անելիքբանկ> ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր- Ա.Ջ.Սարուխանյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Բեսթ-Բիլդինգ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Կողբի 1 թողոց, 5
Բանկ՝ <Հայէկոնոմբանկ> ԲԲԸ
Հ/Հ 163068076716
ՀՎՀՀ 02266584

Տնօրեն ------------ Վ.Հարությունյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ 2
«3» օգոստոս 2017թ. կնքված
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ԱՆՕԴԱՋՈՒ ՍԱՐՔԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Հատակների նախապատրաստում, բետոնային հատակների իրականացման համար	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	10 օրացույցային օրվա ընթացքում
2	Բետոնյա հատակների պատրաստում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	10 օրացույցային օրվա ընթացքում
3	Պատերի երեսապատում գիպսաստվարաթղթե սալերով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15 օրացույցային օրվա ընթացքում
4	Պրեսգրանիտե հատակների պատրաստում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	25 օրացույցային օրվա ընթացքում
5	Պատերի պատրաստում կրկնակի գիպսաստվարաթղթ սալերով, բամբակե միջնորմներով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	30 օրացույցային օրվա ընթացքում
6	Մետաղապլաստե դռների, պատուհանների և համապատասխան շրջանակների տեղադրում ամրացումներով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	35 օրացույցային օրվա ընթացքում
7	Էլեկտրատեխնիկական աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	40 օրացույցային օրվա ընթացքում
7	Կախովի առաստաղի պատրաստում ամստրոնգ տիպի կոնստրուկցիաներով, համապատասխան լուսատուներով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	40 օրացույցային օրվա ընթացքում
8	Գիպսասթվարաթղթե պատերի, մածիկապատում հարդարում և ներկում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	50 օրացույցային օրվա ընթացքում
9	Սանտեխնիկական աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	20 օրացույցային օրվա ընթացքում
10	Մետաղական փորձարկման կենտրոնի պատրաստում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	55 օրացույցային օրվա ընթացքում
11	Կենտրոնական մուտքի կառուցում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	60 օրացույցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	60 օրացույցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ազգային
պոլիտեխնիկական համալսարան
հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ <Անելիքբանկ> ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր----------Ս.Մարուխյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Բեսթ-Բիլդինգ ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Կողբի 1 փողոց, 5
Բանկ՝ <Հայէկոնոմբանկ> ԲԲԸ
Հ/Հ 163068076716
ՀՎՀՀ 02266584

Տնօրեն ----------Հ.Արզումանյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 3
«3» օգոստոս 2017թ. կնքված
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45451700	Վերակառուցման աշխատանքներ (Անօդաչու սարքերի լաբորատորիայի վերակառուցում)	7 769 880	18 129 720	25 899 600	25 899 600	25 899 600	25 899 600

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Անելիքբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր——————————— Գ. Ալոյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Բեսթ-Բիլդինգ ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Կողբի 1 փողոց, 5
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163068076716
ՀՎՀՀ 02266584

Տնօրեն ——————————— Վ. Հարությունյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ 4
«3» օգոստոս 2017թ. կնքված
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«3» օգոստոս 2017թ. կնքված
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն